ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- դեկտեմբերի 2021 թվականի №---Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի №83Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 78-րդ կետը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ԱՅՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի նոյեմբերի 16-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Մեկ տարի վեց ամիս ժամկետով երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 25-ի «ԱՅՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Այսոլար» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №83Ա որոշմամբ «ԱՅՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0668 լիցենզիայով ամրագրված «Այսոլար» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2021 թվականի դեկտեմբերի 10-ը» բառերը փոխարինելով

«մինչև 2023 թվականի հունիսի 10-ը» բառերով, իսկ «մինչև 2041 թվականի դեկտեմբերի 10-ը» բառերը՝ «մինչև 2043 թվականի հունիսի 10-ը» բառերով:

2. «ԱՅՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ «Այսոլար» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի փետրվարի 28-ի №COD/0345 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 6 250 000 (վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2023 թվականի հուլիսի 25-ը գործողության ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի դեկտեմբերի 10-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- դեկտեմբերի 2021թ.